

# Կարեն Սարգսյանի ուղերձը ՀՀ Սահմանադրության ընդունման 28-ամյակի կապակցությամբ

05.07.2023

Միքելի՛ հայրենակիցներ,

Մրտանց շնորհավորում եմ բոլորիս Սահմանադրության օրվա առթիվ:

ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի պետք է գիտակցի և ընդունի Սահմանադրությունը ոչ միայն որպես իրավունք ու պարտականություն, այլ նաև արժեհամակարգ:

Սահմանադրության հաստատման շնորհիվ Հայաստանի Հանրապետությունը վերջնականապես հռչակվեց ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն՝ մարդու և քաղաքացու իրավունքները և ազատություններն ամրագրվեցին երկրի մայր օրենքով:

Ժողովրդավարական երկրում Սահմանադրությունն է պետության ու պետականության առանցքը և երկրի անկախությունը երաշխավորող կարևորագույն ինստիտուտը:

Մեր բոլորի ձգտումը պետք է լինի Մայր օրենքում ամրագրված արժեքներին հավատարիմ մնալն ու դրանց համընթաց քայլերով՝ ազգային նվիրական իդեերն ու նպատակները կյանքի կոչելը:

Որքան բարձր լինի սահմանադրականության գիտակցումը յուրաքանչյուրիս մեջ, այնքան ժողովրդավար կլինի մեր երկիրը:

Կրկին շնորհավորելով այս կարևոր տոնի առթիվ՝ մաղթում եմ բոլորիս խաղաղություն, երջանկություն և ամենայն բարիք: